ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Եղիշե Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության ուսուցումը

Հետազոտող ուսուցիչ՝ Ազնար Հարությունյան
ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ----------3

Եղիշե Չարենցը և իր ժամանակը ----------4

Մեծերը Եղիշե Չարենցի մասին ----------8

«Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության» վերլուծությունը----------10

Ուսուցչի դերը ուսուցման արդյունավետության բարձրացման գործընթացում----14

«Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության ուսուցումը (միջառարկայական կապերի ստեղծում, սովորել սովորելու, մշակութային կարողունակությունների ձևավորում)----------17

«Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության ուսումնառությունն ըստ մոդալության ----------21

Եզրակացություն ----------22

Օգտագործված գրականության ցանկ----------24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Եղ. Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության ուսումնասիրության *նպատակն է* խթանել հետաքրքրասիրություն , որպեսզի սովորողները կարդան, սովորեն, զգան Եղ. Չարենցի լավագույն ստեղծագործությունները, հաղորդակից լինեն չարենցյան պոեզիայի գոհարներին:

Հետազոտական աշխատանքի *խնդիրներն են՝*

1.ծանոթանալ Չարենցի գրական ժառանգությանը, մասնավորապես ընկալել «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության գաղափարը,

2.վերլուծել, զգալ պատկերը բանաստեղծության մեջ,

3.արտահայտիչ ընթերցել տաղը՝զարգացնելով սովորել սովորելու, մշակութային, լեզվական կարողունակություններ, ստեղծել միջառարկայական կապեր:

Աշխատանքի ***արդիականությունը*** պայմանավորված է ստեղծագործության հայրենաշունչ գաղափարներով, հայրենիքի կերպարի վերհանումով՝ հայ ժողովրդի անցյալի փառքերը մատնանշելով որպես մեր ժողովրդի հավերժության գրավական:Եղ. Չարենց պոետն այսօր նույնքան արդիական է , որքան 20-րդ դարի սկզբին: Նրա ստեղծագոծությունները երբեք չեն կորցնում իրենց գաղափարական և գեղարվեստական թարմությունն ու գրավչությունը:

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԸ ԵՎ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԸ

Ամեն մի կայացած անհատականություն իր ծննդյան օրից փակ ծրարի նման իր մեջ կրում է իր ժողովրդի ողջ մշակութային ժառանգությունը, պատմությունը , մեծ ու նշանակալից իրադարձությունները, երևույթները, նույնիսկ ստեղծագործություններն ու դրանց կերպարները: Այդ հանճարներն իրենց մեջ կրում են ողջ տիեզերքը: Այդպիսի հանճարեղ անհատականություն է Եղ. Չարենցը: Նա իր բացառիկ ձիրքով ի մի բերեց այն դարավոր ճանապարհը, որ հայ հոգևոր կյանքն անցել էր Մ.Մաշտոցի ապաշխարանքի երգերից ու Մ. Խորենացու « Հայոց պատմություն» -ից մինչև Հովի. Թումանյան ու Վ. Տերյան: Ստեղծագործական ուղղվածությամբ, ընդգրկումների հարստությամբ, գրական զարգացման ու առաջընթացի հզոր թափով Չարենցը դարձավ այն ուղենշային դեմքը, որով սկսվում է հայ գրականության նորագույն շրջանը: Հայ գրականության գալիք օրվա երազանքով՝ այդ անցումը գաղափարապես ու գեղագիտորեն նախապատրաստել էին Դ.Վարուժանը, Վ. Տերյանը, նաև ժամանակի մյուս հայ գրողները, բայց գեղարվեստական մտքի բեկումնային փուլի կազմակերպումն ու զարգացումը վիճակված էր Եղ. Չարենցին: Չարենցի ձայնը գրական կյանքում լսելի եղավ առաջին իսկ գրքերի հրապարակումից . Նիկոլ Աղբալյան քննադատը հրապարակավ «ավետեց ամբողջ աշխարհին, որ ծնվել է մեծ մի պոետ» , բանաստեղծ Գուրգեն Մահարին հետագայում հուշագրեց, թե Չարենցի«Երեք ռադիոպոեմ» գրքույկը « պայթեց ռումբի պես» : Հայտնվելով հայ գրական բուռն կյանքի կենտրոնում և դառնալով ժամանակի կենտրոնական դեմքը՝ Չարենցը ստեղծեց մի պատկառազդու գրականություն, որ հայ բանաստեղծության նոր ու բարձր որակն էր , հայ մշակույթի մեծ նվաճումը:

Եղիշե Չարենցի բարդ ու հարուստ ստեղծագործական ուղին տևել է ուղիղ 25 տարի: Նրա մեջ, մեկը մյուսին շարունակելով ու ամբողջացնելով, երբեմն նաև հերքելով, ասես ապրում էին մի քանի ստեղծագործող՝ հայրենիքի ողբերգության ու մարդու ողբերգության բանաստեղծը, խորհրդավոր երազանքների ճամփորդը (1912-1917) , կյանքի վերափոխման պայքարի մունետիկն ու իր ժողովրդի

փրկության ժամի ողջակեզը (1918-1921) ,նոր արվեստի պատգամախոսն ու նոր օրերի երգիչը (1922-1924) , ժամանակի վիպական պատմության տարեգիրը (1925-1930) , պատմության երթի ու ժողովրդի բախտի փիլիսոփան (1931-1934) , ողբերգական մաքառումների ու սխրանքի ճշմարտախոս վկան (1935-1937) :

Եղիշե Չարենցի գրական ճանապարհը, որտեղ իրենց առանձնահատուկ տեղն ունեն պոեմները, կարելի է բաժանել շրջանների, որոնք տարբերվում են իրենց գաղափարական, թեմատիկ և ոճական հատկանիշներով:

Նախահոկտեմբերյան տարիներին գրած «Կապուտաչյա հայրենիք » , « Դանթեական առասպել» պոեմներում մեծ է սիմվոլիզմի ազդեցությունը:

1918-1921 թ.թ. Չարենցի պոեզիայի առաջատար թեման դառնում է հեղափոխական տարերքը, որն արտացոլված է «Սոմա», «Ամբոխները խելագարված», «Ամենապոեմ» և այլ գործերում, որոնց մեջ կյանքի վերափոխման ազդակը վերածվում է պայքարի ոգու և իր մեջ առնում «ողջակիզված բոլոր հոգիներին»:

Չարենցի ստեղծագործության երրորդ շրջանը 1922-24 թվականներն են , երբ ստեղծագործության մեջ տիրապետող են դառնում ագիտացիոն պոեզիայի ձևերը («Պոեզոզուռնա», «Մաճկալ Սաքոյի պատմությունը» և այլն), նա տուրք է տալիս ապագայապաշտությանը՝ ժխտելով անցյալը («Ռոմանս անսեր»): Ստեղծագործական նոր որոնումների ճանապարհին Չարենցը գրում է շրջադարձային պոեմներ, ինչպիսիք են «Խմբապետ Շավարշը», «Դեպի լյառը Մասիս», «Գովք խաղողի, գինու և գեղեցիկ դպրության», «Նորք», «Պատմության քառուղիներով» և այլն, որոնց մեջ հանրագումարի է բերվում ժողովրդի անցած ամբողջ ճանապարհը, վերագնահատվում հայ երգի պատմական ուղին:

Կյանքի վերջին տարիներին Չարենցն զգում էր վերահասու աղետը և քաջ գիտակցում, որ ստալինյան վարչակարգի պայմաններում իր հետագա գործունեությունը դատապարտված է կիսատ մնալու ճակատագրին: Այդ մտայնությամբ էլ գրիչը դարձնելով պայքարի լավագույն զենք՝ Չարենցը պարտավորվում է իր ժամանակի ճշմարտությունը վկայել ապագա սերունդներին: Կյանքի խոշտանգիչ պայմաններում նա խոսք է ուղղում երկնային Տիրոջը և գրում «Իմ լերան աղոթքը», «Չարչարանաց լերան աղոթքը» պոեմները, նարեկացիական շնչով Աստծո առաջ խոստովանում ժամանակի չարանենգ

մեղքերը, մտորում հայ երգի պատմական ճակատագրի մասին («Որպես գորշ, դեղին տերևներ»), ոգեկոչում Կոմիտասին («Կոմիտասի հիշատակին» պոեմը), որը հայ երգի ու հայ երգասանի ողբերգական ճակատագիրն է խորհրդանշում, իսկ հոգեկան անկումների և տվայտանքների մեջ հայտնվելով՝ բանաստեղծը վերադառնում է կյանքի հեռավոր և արդեն հուշ դարձած սերերին, որոնք նրա հոգում ծնում են երազներ:

Չարենցի պես ստեղծագործ անհատը պատմության առջև կանգնում է ժամանակի ամբողջ ընդգրկումով: Իսկ ժամանակը նրա համար և՛ իր կյանքի ժամանակն էր, և՛ պատմական ժամանակը: Այդ լայնությամբ էլ նա ի մի է բերում հայ և համաշխարհային գեղարվեստական զարգացման ամբողջ հարուստ փորձը:

1934-37 թվականները Եղ. Չարենցի ստեղծագործական կյանքի բեկումնային շրջանն են կազմում: ‹‹Եկան օրեր դժնի, առավել դժնի », և նոր Մեծ եղեռնի առաջին զոհերից մեկը դարձավ Եղ. Չարենցը: Նրա սերնդակից Հր. Հովհաննիսյանը իր « Չարենցի հետ՝ առանց Չարենցի » հոդվածում ասում է. « Չարենցն արգելվեց, բայց Չարենցի ոգին շարունակեց ապրել» : Նա չկար, սակայն կար նրա խոսքը, նրա պատգամը, նրա ոգին:

Այսօր էլ , որպես հավիտենությանն ուղղված պատգամ, ժամանակի խորքից հնչում է մեծ նահատակի խրոխտ, հպարտ, բայց և տառապագին ձայնը.

Իմ օրերում շա՜տ էր դժվար երգը՝ կյանքի համար երգած-
Յուրաքանչյուր բառը կամ մի թռիչք էր վեհ, կամ մութ արկած:
Մեծ եմ ու վեհ իմ օրերում – ես այդ գիտեմ հուր հավիտյան,
Ողջու՜յն, իմ ե՛րգ, իմ խնդությու՜ն, իմ օրերի անհու՜ն մատյան:

Դարի բանաստեղծը մարգարեաբար կանխազգում էր, որ մշտապես քայլելու է իր ժողովրդի և ժամանակի հետ:

Ինչպես նշում է Ա. Մարությանը, նա եկավ «հնադարյան հայ քնարերգության բազմալար քնարին ավելացնելու ևս մի լար՝ իր «հողմավար ու շփոթ» օրերի երգն ավետող չարենցյան լարը»[1]:

[1] Չարենցյան ընթերցումներ 2, Երևան, 1974թ., էջ 159:

Նա մնում է մեր ամենաարդիական բանաստեղծը, որի կիրառած ժանրերը, մոտիվներն ու ոճական հնարքները կարող են ծառայել այսօրվա և ապագայի արվեստին: Ըմբռնելով բարձրագույն արվեստ կերտելու օրինաչափությունները՝ Եղ. Չարենցը ստեղծեց գրական հուշարձաններ,որոնք արտահայտչականության, պատկերավորության առումով յուրահատուկ հանրագիտարան են:

Այս ամենը հիմք են տալիս ասելու, որ նորագույն շրջանի հայ գրականությունը, հանձին Եղ. Չարենցի, ունեցավ իր մեծագույն հիմնադրին, գեղարվեստական գրականության հետագա ուղիները կանխատեսող մարգարեին:

Նա հայ գրական լեզուն Տերյանից հետո բարձրացրեց մի նոր աստիճանի՝ նշանավորելով այդ լեզվի զարգացման նոր որակը, դառնալով հայ նորագույն գրականության առաջատար դեմքը:

ՄԵԾԵՐԸ «ԵՍ ԻՄ ԱՆՈՒՇ ՀԱՅԱՍՏԱՆԻ…»-Ի ՄԱՍԻՆ

Բացի Սուրբ Մեսրոպի ու Սահակի աղոթքներից, որ մանկության հեռավոր տարիներին ժառանգել եմ ծնողներիցս, դպրոցում չեմ սիրել բանաստեղծություն անգիր անել։

… Բայց, ահա՛, չեմ հիշում, թե երբ եմ առաջին անգամ լսել կամ կարդացել «Ես իմ անուշ Հայաստանին»։ Երբեք բերանացի չեմ սովորել, պարզապես գիտցել եմ։ Ինձ թվում է, թե Սահակի ու Մեսրոպի աղոթքների հետ էլ բերել եմ։

Դա մեր այսօրվա աղոթքն է։ Աղոթք, որ կարելի է թե՛ մտքում հյուսել, թե՛ մրմնջալ շշուկով, թե՛ արտասանել բարձրաձայն։

Իսկ ինչի՞ հետ համեմատես «Ես իմ անուշը»։ Քիչ կլինի ասել, թե բանաստեղծություն է։ Պոեմ էլ չէ, վեպ՝ նույնպես։

«Ես իմ անուշ Հայաստանին» ավելի շատ բոլոր մասշտաբներից դուրս պաննո է։ Պաննո՝ հասցված ժողովրդական էպոսի աստիճանին։ Սա անհիշելի ժամանակներից եկող Հայասա-Ուրարտու-Արմենիա երկրի համապարփակ պաննո-դիմանկարն է։ Դա մեր ազգի կենսագրության ու վարքի կենդանի արտացոլքն է, մեր կրած տառապանքների ու փայփայած իդեալների, մեր անկումների ու վերելքների, արհավիրքների ենթակա մեր ճակատագրի ու անմեռ մնալու մեր ձգտման գեղարվեստական համադրությունն ու բյուրեղացումն է։ Այսպիսի մի երկ աշխարհ բերելու համար պետք էր ամենաքիչը կիսաաստված լինել։

- Մարտիրոս Սարյան

Չարե՛նցը, Չարե՛նցը… «Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում…»։ Անոր չհանդիպած՝ գիտեի արդեն իր այս քերթվածը։ Սկսած էի արտասանել Ամերիկայի մեջ։ Ամեն մեկ բառը բացատրել տված էի ու գրեթե գոց սովորած։ Զայն մինչև այսօր կը նկատեմ մեր երկնքին, մեր հողին, մեր պատմության նվիրված ամենեն գեղեցիկ երգը, գովաբանական աղոթքը։ «Հայր մեր»–ին նմանվող աղոթք մը։

- Վիլյամ Սարոյան

«Ես իմ անուշ Հայաստանի…». Հայ տառերով, հայ բառերով այդպիսի բանաստեղծություն չի գրված հայրենասիրության տեսակետից։ Սա եզակի, աննախընթաց բան է։ Նույնիսկ կարելի է ասել, որ եվրոպական ու համաշխարհային ժանրի բանաստեղծությունների մեջ այդպիսի թափով, այդպիսի ընդարձակ խոսքերով գրված բան՝ գոնե ես չեմ հիշում։

- Ավետիք Իսահակյան

«ԵՍ ԻՄ ԱՆՈՒՇ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

«Ես իմ անուշ Հայաստանի…» տաղը զետեղված է Չարենցի «Տաղարան» բանաստեղծական շարքում, որ գրվել է 1920-1921 թվականներին:Չարենցն իր լավագույն բանաստեղծական շարքը նվիրել է կնոջը՝ Արփենիկ Չարենցին , որին նա համարել է՝կին, ընկեր և հերոսական բարեկամ՝: Այս շարքի մեջ Չարենցը ստեղծագործաբար օգտագործել է միջնադարի վերջին մեծ բանաստեղծ Սայաթ-Նովայի ոճը: Այսինքն՝ Սայաթ-Նովայի բառապաշարով և ձևով ոճավորել է իր խոսքը: Չարենցի շարքը բաղկացած է 20 տաղից: Շարքի 1-18-րդ տաղերն ունեն սիրային բովանդակություն: Չարենցը երգում է գոզալի կերպարանքով հարություն առած իր բարձր սերը, որն այդպես էլ մնում է անհասանելի: Վերջին երկու տաղերն ունեն հայրենասիրական բովանդակություն: Կնոջ անմատչելի սիրուց նա հասնում է հայրենիքի անփոխարինելի ու բացառիկ սիրուն:

Արդեն մի քանի տասնամյակ է, ինչ բանասերները վիճում են մեկ բառի կամ, ավելի ճիշտ, մեկ տառի շուրջ. արևահամ բա՞ռ, թե՞ բար: Երկրորդ տարբերակի պաշտպանները բերում են այն փաստարկը, թե արևահամ կարող է լինել բարը (միրգ, պտուղ), բայց ոչ երբեք բառը (խոսք, լեզու):

Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում» տաղի *«արևահամ բառի»* ակունքը Հովհաննու ավետարանն է, որն սկսվում է *«Ի սկզբանե էր Բանն, և բանն էր առ Աստված, և Աստված էր Բանն»*: Բան՝ այսինքն խոսք. Աստված խոսք է: Պետք է *«բառ»* լիներ, որպեսզի գեղարվեստական պատկերը ներքուստ զարգանալով հասներ ողբաձայն երգի, երկաթագիր գրքի, Նարեկացու ու Քուչակի:

Ե՞րբ է ծագել այս վեճը՝ դժվար է ասել: Գուցե դեռ բանաստեղծի կենդանության ժամանակ: Բայց տարիներ շարունակ վեճը կրել է բանավոր խոսք ու զրույցի բնույթ և որևէ «սպառնալիք» չի ներկայացրել բանաստեղծության տեքստի համար:

Ակադեմիկոս Էդվարդ Ջրբաշյանն իր «Չորս գագաթ» գրքում գրում է. *«Արևահամ բառի»* մեջ գեղարվեստական զարմանալի ուժով մարմնավորված են հայ ժողովրդի խոսքն ու լեզուն, նրա մշակույթը՝ ալեհեր ու նոր, ինքնօրինակ ու անկրկնելի, մարմնավորված են հայրենիքի պատմության և ներկայի, նրա բնության ու արևի

անջնջելի կնիքը կրող հոգևոր արժեքները։ Ահա թե ինչու մեզ համար հատկապես թանկ և կարևոր է այդ արտահայտությունը»[2] ։

1962թ. Չարենցի երկերի գիտական հրատարակության առաջին հատորում բանաստեղծությունը տպագրվել է *արևահամ բար* ձևով։ Դրանով, ըստ Զրբաշյանի, *«սկիզբ է դրվել տեքստաբանական մի ցավալի սխալի, որը, չունենալով գիտական և իրավական որևէ հիմք, ունի այն «առավելությունը», որ համապատասխանում է պոեզիայի վերաբերյալ պարզունակ պատկերացումներին»[3]:*

Ըստ գրականագետի՝ առաջարկվող ուղղումն անընդունելի է ոչ միայն իր կամայական բնույթի, այլև այն պատճառով, որ էապես իջեցնում է բանաստեղծության բովանդակությունը։

Այդ առաջարկի կողմնակիցները երևի չեն նկատում, թե ինչքան է հասարակացվում, նույնիսկ գռեհկացվում բանաստեղծության սկիզբը, երբ «արևահամ բառի» հմայքն ու խորությունը փոխարինվում են «արևահամ բար», այսինքն՝ միրգ, պտուղ սիրելու պրոզայիկ իրողության արձանագրմամբ։ Բացի այդ, բանաստեղծական խոսքի մեջ տառացի ճշգրտություն որոնողներին պետք է հիշեցնենք, որ «արևահամ» մակդիրն ինքնին արդեն որոշակի փոխաբերություն է և երբեք ուղղակի առումով հասկացվել չի կարող, եթե նույնիսկ կիրառվի մրգի նկատմամբ։ Արևն ի՞նչ համ կարող է ունենալ, կամ ո՞վ է որոշել այդ համը...՝ Էդվարդ Զրբաշյան։

Վլադիմիր Սուտիրինի «Очерки литературы Закавказа» (Թիֆլիս, 1928թ.) գրքում բերված է Չարենցի բանաստեղծության առաջին և վերջին տների ռուսերեն տողացի թարգմանությունը։ Իր գրքի առաջաբանում Սուտիրինը հայտնել է, որ Անդրկովկասի ազգային գրականությունների հետ ծանոթանալու համար իրեն «ամենաէական օգնություն են ցույց տվել» մի շարք տեղացի գրողներ։ Հայերից հիշատակվում է նաև Չարենցը։ Ըստ Զրբաշյանի՝ Չարենցն է օգնել ռուս քննադատին վեճերի առիթ դարձած իր բանաստեղծությունների տողացի թարգմանությամբ։ Ահա առաջին տողը.

Люблю я «солнцевкусное» слово сладкой Армении моей...[4]

---

[2] Էդվարդ Զրբաշյան, Չորս գագաթ, Երևան, 1982թ., էջ 438
[3] Էդվարդ Զրբաշյան, Չորս գագաթ, Երևան, 1982թ., էջ 439:
[4] Էդվարդ Զրբաշյան, Չորս գագաթ, Երևան, 1982թ., էջ 441:

Լեզվաբան, գրականագետ Ռաֆայել Իշխանյանն իր *«Չարենցի լեզվի զարգացման շրջանները»* հոդվածում համոզմունք է հայտնել, որ Չարենցը նախապես գրած է եղել *«արևահամ բար»*:

«...Հազիվ թե Չարենցը սկզբնապես Հայաստանի արևահամ բառ գրած լինի՝ հայոց լեզու իմաստով, քանի որ այդ կապակցության մեջ բառ-ը ուժեղ չի խորհրդանշում լեզու իմաստը, և Հայաստանի լեզու ընդունված անվանում առհասարակ չկա, ինչպես որ սովորական չէ Ռուսաստանի լեզու, Վրաստանի լեզու և այլն: Սա, կարծում ենք, գլխավոր փաստարկն է հօգուտ բար-ի»

Ռաֆայել Իշխանյան

Գրականագետ Թադևոս Տոնոյանը «Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» տաղի բառը» հոդվածում նշում է. *«Հայաստանի առաջին բնութագրականը բառն է: Այսինքն՝ բառը Հայաստանի բանալին է: Բառի (լեզվի) նկատմամբ չարենցյան այս վերաբերմունքը հայերենի լեզվամտածողական արժեհամակարգային հիմնական իրողություններից մեկն է, և, իհարկե, դժվար է պնդել, թե Հայաստանը ներկայացնող թերևս ամենալարված այս տեքստը պարզապես զգացմունքային զեղում է»:*

Ըստ գրականագետի՝ հայրենիքի նկատմամբ բանաստեղծի սիրո կիզակետում բառ-ը չպետք է լիներ, քանի որ հաջորդող տողերում հեղինակի «սիրո թիրախները» (սազի լարը, ծաղիկները, վարդերի բույրը, երկինքը, ջրերը, լիճը, արևը, բուքը, պատերը, քարը) ավելի քան տեսանելի, շոշափելի, առարկայական ու նյութական են, քան բառ վերացական հասկացությունը, և որ հիշյալ բառաշարքից թերևս միայն «հեզաճկուն պարն» է, որ առարկայական չէ, բայց, այնուամենայնիվ, տեսանելի է: *«Անհնար է շոշափել բառը, դժվար է տարորոշել արևի համը: Չարենցյան տաղի հենց առաջին տողում հայտնված բառ-ը, առաջին հայացքից չի ներդաշնակվում սիրել բայի մյուս ուղիղ խնդիր լրացումների հետ: Սակայն այդ պատկերացումը կարող է ստեղծվել ոչ խորքային ներտեքստային տրամաբանության հետևանքով: Նույն տրամաբանությամբ մեզանում որոշ ժամանակ գործում էր հանկարծահայտ այն թյուր կարծիքը, թե, իբր, բառ-ի փոխարեն բար է եղել: Հասկանալի է՝ բար-ը ավելի շոշափելի, տեսանելի և առարկայական է ու նրա միջոցով նույնիսկ արևի համն է*

տարորոշելի դառնում և այդ հանգամանքի շնորհիվ ավելի դյուրությամբ տեղավորվում տաղի ներտեքստային ընդհանուր տրամաբանության մեջ»:

ՈՒՍՈՒՑՉԻ ԴԵՐԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Աշխարհում ոչ մի տեղ չեք գտնի ավելի բարձր առաքինություն, քան այն օտար մարդու դրսևորած առաքինությունը, որը վերցնում է ձեր երեխային, դաստիարակում ու կրթում է նրան՝ կատարելով այն աշխատանքը, ինչն ինքներդ շատ հազվադեպ եք անում:

Մ. Լյութեր

Դպրոցական համակարգը ձևավորում են մանկավարժության փոխկապակցված մասերը՝ զարգացում, ուսուցում, դաստիարակություն, կրթություն և դպրոցավարություն: Արդյունավետ է այն համակարգը, որը զարգացնում է միտքը, կատարյալ է դարձնում մարմինը, դաստիարակում է բնավորությունը, մշակում գեղագիտական ճաշակ և վարվելակերպ, այսինքն՝ երեխային նախապատրաստում է հասուն կյանքին:Դպրոցում ուսուցում ապահովելու լավագույն ձևը դասն է, որի հիմնական գծերն են նպատակադրումը, հետևողականությունը, դաստիարակչական ներուժը և մթնոլորտը: Դասը մանակավարժի ընդհանուր կուլտուրայի և մասնագիտական վարպետության հայելին է:Խոսելով ուսուցչի դերի մասին՝ նշեմ, որ դպրոցում կողմնորոշիչ դեմքը ուսուցիչն է: Լավ ուսուցչին բնորոշ որակներն են մասնագիտական խորը գիտելիքները, ողջախոհ մոտեցումը աշխատանքին, երեխաների նկատմամբ անկեղծ սերը, արտիստականությունը, տարատարիքային հոգեբանության իմացությունը, միտքը մարզող և բնավորությունը ձևավորող օգտակար վարժություններ որոնելու ունակությունը, աշակերտի հանդեպ պատասխանատվության զգացումը: ՈՒսուցիչն այն մարդն է, ով կարող է ուրիշին մղել ուսման, ով ընդունակ է աշակերտների մեջ սերմանել բարոյական արժեքների համակարգ:Լավ ուսուցիչը իր աշխատանքով իրագործում է հայտնի միտքը դաստիարակության մասին.«Առաքինի, խելամիտ և իր գործերը հմտորեն վարող մարդը գերադասելի է այս հատկանիշներից զուրկ գիտնականից»:

Ուսումնական գործընթացի հաջող իրականացման համար ուսուցչին անհրաժեշտ են ոչ միայն տարբեր մեթոդների իմացություն, այլ նաև ուսուցման նպատակներից բխող մեթոդները ճիշտ ընտրելու և կիրառելու կարողություն:

Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է հետևյալ մոտեցումը. «Լսում եմ՝ մոռանում եմ, տեսնում եմ ՝ հիշում եմ , անում եմ՝ հասկանում եմ»:

Խմբային գործունեության կազմակերպումը դասի ժամանակ ստեղծում է շփման բարենպաստ հոգեբանական մթնոլորտ,ինչը թուլացնում է աշակերտի մտավոր լարումը և չի հոգնեցնում նրան:

Հաջողության հասնելու համար ուսուցիչներին հարկավոր են երեխաներին կառավարելու նոր, համարձակ եղանակներ, արդյունավետ ուսուցման համար անհրաժեշտ մոտեցումներ: Դասը դասախոսության կամ հարց ու պատասխանի եղանակով վարելուց շահում են միայն ակտիվ երեխաները: Ցածր ինքնագնահատական ունեցող, երկչոտ երեխաները տուժում են: Հմուտ ուսուցիչը կարողանում է ճիշտ համադրել ավանդական և ժամանակակից մեթոդները և ստանալ ցանկալի արդյունք:

ՈՒսուցիչ -աշակերտ հարաբերությունները պատշաճ հարթության վրա պահելու, դասապրոցեսը ճիշտ կազմակերպելու համար հարկ եմ համարում անդրադառնալ իմ կողմից արժևորված մի շարք «ոսկե» կանոնների[5].

- անհրաժեշտ է բոլոր աշակերտներին արդար վերաբերվել. հմուտ ուսուցիչը դասարանում սիրելիներ չունի.
- ոգևորել աշակերտներին, հատկապես նրանց, ովքեր ընկերների կողմից քիչ են ուշադրության արժանանում.
- գովեստի խոսքերն ուրիշների ներկայությամբ ասել, քննադատությունը՝ առանձին.
- պետք չէ անտեսել անկեղծության կարևորությունը: Եթե աշակերտների հետ անկեղծ լինենք, նրանք էլ մեզ հետ անկեղծ կլինեն:
- Աշակերտներին գովել միայն բարեխիղճ աշխատանքի և իրական արդյունքի համար: Սուտ գովեստը կարող է կեղծ հպարտություն ծնել և հետագայում ձախողված երազների պատճառ դառնալ:
- Սովորողներին տրվող հրահանգներն ու բացատրությունները պետք է լինեն հստակ և հակիրճ:
- Դասերին մի՛ հանդուրժեք ինքնանպատակ աղմուկը: Թեև աղմուկը վկայում է աշխուժության մասին, սակայն այն պետք է բխի կատարվող աշխատանքից:

[5] Կյանքի հմտություններ (ուսուցչի ձեռնարկ),1-ին դասարան,էջ 6,7

- Երեխաներին գիտելիքներն անհրաժեշտ են, սակայն դրանցից ոչ պակաս հմտություններ ու կարողություններ են պետք:

ՈՒսուցիչ մնալու միակ ուղին սերն է աշակերտների նկատմամբ: Նրանք երբեմն հիասթափեցնում են մեզ, սակայն ավելի հաճախ զարմացնում, ապշեցնում և հիացնում են: Սրանք էլ հենց այն պահերն են, երբ ուսուցիչն զգում է, որ իր աշխատանքն ապարդյուն չէ:

«ԵՍ ԻՄ ԱՆՈՒՇ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ (ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ , ՍՈՎՈՐԵԼ ՍՈՎՈՐԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ)

Ծրագրային ցանկացած նյութի արդյունավետ ուսուցման գրավականը ուսումնական գործընթացի ճիշտ պլանավորումն է, ինչպես նաև՝ դասավանդման ժամանակակից մեթոդների և հնարների նպատակահարմար ընտրությունն ու կիրառությունը: ՈՒսուցիչը, առաջնորդվելով պետական առարկայական չափորոշչային պահանջներով, յուրացնելով դասապլան կազմելու հմտությունները, պետք է հստակ գիտակցի դասի նպատակները, մշակի դրանց հասնելու դյուրին և մատչելի ուղիները, միջոցներն ու հնարները:

Մասնագիտական խորը և կայուն գիտելիքները, ուսուցման գործընթացի ժամանակակից ռազմավարության մշակումը, սովորել սովորեցնելու նախապայմանն ուսուցչին օգնում են ուսուցման ընթացքում իրագործելու իր առջև դրված հեռահար նպատակները. այն է՝ տվյալ դասարանի համար նախատեսված նյութի ուսուցումը կազմակերպել հետաքրքրաշարժ , հիմնավոր ձևերով ու եղանակներով՝ ձևավորելով ու զարգացնելով աշակերտների գիտելիքները, կարողությունները և հմտությունները, արժեքային համակարգը, կարողունակությունները: Գրականության դասաժամերին ուսուցիչը զարգացնում է աշակերտների ոչ միայն արտահայտիչ ու վարժ կարդալու հմտությունները, այլև ընթերցածն ըմբռնելու, նյութն ինքնուրույն հետազոտելու , վերլուծելու կարողությունները: Նշված մոտեցումների ու պահանջների շրջանակում ներկայացվում է Եղիշե Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության ուսուցումը:

Դասի սկզբում ուսուցչուհին ցուցադրում է Մարտիրոս Սարյանի «Եղիշե Չարենց» նկարը՝ առաջարկելով սովորողներին մեկնաբանել այն:Մտքերի տարափով ասված մտքերը լսելուց հետո ուսուցչուհին տալիս է արվեստում ընդունված մեկնաբանությունը:



Մարտիրոս Սարյանը Եղիշե Չարենցի կենդանության օրոք մտերիմ էր նրա հետ, բանաստեղծի անզուգական տաղանդի երկրպագուն էր:Իր սերն ու հիացմունքը Չարենցի հանդեպ տաղանդաշատ նկարիչն արտահայտել է՝ ստեղծելով բանաստեղծի՝ ասես անհունության մեջ թափանցող, սևեռուն հայացքով գալիքին նայող դիմանկարը: Դիմանկարի կողքին պատկերված դիմակը խորհրդանշում է անսահմանությունն ու հավերժությունը՝ եգիպտական սֆինքսի անբարբառ խոսունությամբ՝ միաժամանակ արտահայտելով սուր տագնապ գալիք արհավիրքների նկատմամբ:Սարյանը Չարենցին պատկերել է ժամանակի հոլովույթում:Նկարի միջոցով Սարյանը կարծես թե բացահայտում է մեծ պոետի նուրբ ու զգայուն, աշխարհը սրությամբ ընկալող խորունկ հոգին, ներքին բարդ, հակասական ու հարուստ ներաշխարհը:

Բանաստեղծությունը համակողմանիորեն մեկնաբանելու և պատկերային համակարգի վերլուծություն կատարելու նպատակով անհրաժեշտ է *իմաստի ընկալման փուլում* դասարանը բաժանել խմբերի՝ տալով հետևյալ հանձնարարությունները.

1-ին խումբ- պատմական ակնարկ ներկայացնել հայ ժողովրդի անցած ուղու մասին,

2-րդ խումբ-ներկայացնել տեղեկություններ Գր. Նարեկացու, Ն. Քուչակի մասին,

3-րդ խումբ-պատմական և աշխարհագրական ակնարկ ներկայացնել Արարատ լեռան մասին,

4-րդ խումբ- բանաստեղծության տողերը վերածել գույների,

5-րդ խումբ- պար բեմադրել՝ ըստ Աշ. Սաթյանի «Ես իմ անուշ Հայաստանի» երգի,

6-րդ խումբ – բանաստեղծությունից դուրս գրել մակդիրներն ու փոխաբերությունները:

Կշռադատման փուլում ուսուցչուհին,ցուցադրելով Մարտիրոս Սարյանի «Հայաստան » կտավը , հանձնարարում է սովորողներին Վենի դիագրամի միջոցով կտավի և Եղիշե Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի » բանաստեղծության նմանությունները և տարբերությունները:

Այս աշխատանքն ավարտելուց հետո միայն հանձնարարել անգիր սովորել բանաստեղծությունը:

Առաջարկում եմ նաև դասն ամփոփել հետևյալ հարցերով.

1.ինչպիսի՞ն է հայրենիքի կերպարը չարենցյան այս տաղում.

2.ո՞ր հատվածն է գեղեցիկ , ինչու՞.

3.Նշե՛ք, թե որ մտքերի հետ եք համամիտ, որոնց հետ՝ ոչ: Կարծիքները հիմնավորե՛ք:

Որպես դասի ելք կարելի է հանձնարարել սովորողներին իրենց երևակայական ճամպրուկներում տեղավորել այն ամենը, ինչն իրենց դուր եկավ դասի ընթացքում,ինչը այսօր սովորեցին և «աղբամանը» նետել այն ամենը, ինչն իրենց խանգարում է:

Գրականությունը կարելի է «տեսանելի» դարձնել՝ օգտագործելով նյութի ընձեռած հնարավորությունը:Գեղարվեստական շատ երկեր գրված են «բառային նկարչության» գեղարվեստական հնարով, ինչը հնարավորություն է ընձեռել նկարազարդելու գրական ստեղծագործությունները:Կան պատկերավոր ստեղծագործություններ, որոնց յուրաքանչյուր հատվածը, քառատողը, անգամ մի

տողը կարելի է ներկայացնել պատկերի միջոցով: «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը ևս հնարավորություն է տալիս ստեղծել ցուցաժապավեն՝ պատկերներն ավելի տեսանելի դարձնելով: Նման ցուցաժապավեն ստեղծելու համար յուրաքանչյուր կադր (նկար-էջ) ուղեկցվում է հատուկ ընտրված տեղեկատվական տողերով և մեկնաբանություններով: Սովորողները մեծ ջանասիրությամբ կկատարեն նմանատիպ աշխատանք, որը կարող է համարվել նախագծային աշխատանքի լավագույն օրինակ:

«ԵՍ ԻՄ ԱՆՈՒՇ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՄՈԴԱԼՈՒԹՅԱՆ

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՆ՝

1.Պատկերել բանաստեղծական տեքստն՝ ըստ անհատական զգայական ընկալման:

2.Քննարկել և բացատրել տեքստի խորհրդանիշները:

3.Ըմբռնել բանաստեղծական տեքստի ասելիքը:

ԴԱՍԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԵՆ՝

1.Դասակարգել անհատական զգայական ընկալումներն ըստ տեքստի:

2.Տեքստում գտնել և խմբավորել պատկեր, ձայն,զգացողություն նշող բառերը և բառակապակցությունները:

3.Պարզաբանել տեքստի բառերը և բառակապակցությունները:

Դասին կիրառվում է ԽԻԿ համակարգը:

Դասն սկսվում է 5 – րոպեանոց շարադրանքով:Ուսուցչուհին սովորողներին առաջարկում է տրված բառերի կիրառմամբ տեքստ կազմել՝ *արևահամ, ողբանվագ, լացակումաց, վառման, հեզաձկուն, մուգ, ջինջ, լուսե, վիշապաձայն, վսեմ, հնամյա, հազարամյա, ողբաձայն, երկաթագիր, արյունաքամ, արնավառ, լուսապսակ,ճերմակ, անհաս:*

Այնուհետև բացատրում են վերոնշյալ բառերի իմաստը կամ գրում են հոմանիշները՝ անհրաժեշտության դեպքում օգտվելով բառարաններից:

Խթանման փուլի հաջորդ քայլն է դասարանը բաժանել 4 խմբի, յուրաքանչյուրին տալ «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության 1 քառատող՝ բաց թողնված բառերով՝ խմբերին հանձնարարելով տրված մակդիրները տեղադրել համապատասխան տեղերում:

Իմաստի ընկալման փուլում ուսուցչուհին կարդում է բանաստեղծությունը կամ միացնում է ձայնագրությունը՝ Խորեն Աբրահամյանի կատարմամբ, և պահանջում խմբերին տպավորությունները 1 նախադասությամբ գրել նույն թղթի վրա՝ կիրառելով «Գրիչը կենտրոնում » մեթոդը:Այնուհետև հանձնարարում է սովորողներին բանաստեղծության տեսողական ընկալմամբ գրել իրենց տեսած

պատկերները, որոնք ծնվել են բանաստեղծությունը կարդալու ընթացքում և ներկայացնել դասարանին: Երկրորդ քայլով սովորողները գրում են իրենց լսած ձայները, որոնք ծնվել են բանաստեղծությունն ընթերցելու ընթացքում, իսկ երրորդ քայլով նույն գործողությունն են կատարում՝ նշելով բանաստեղծության առաջացրած զգացողությունները:Այնուհետև լրացնում են աղյուսակը՝ բանաստեղծությունից դուրս գրելով պատկեր, ձայն և զգացողություն առաջացնող բառերը:

Աշխատանքը նպաստում է բանաստեղծության անհատական ընկալման զարգացմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ցանկացած բանաստեղծության ուսուցում դառնում է սովորողներին ջերմացնող, նրանց ներաշխարհը լցնող միջոց: Այն ավելի արդյունավետ է, եթե խոսքը վերաբերում է՝Ես իմ անուշ Հայաստանի՝ տաղին: Ուսուցման հետաքրքիր մեթոդներ և եղանակներ ընտրելով՝ ուսուցիչը բանաստեղծության ուսուցումն ավելի տպավորիչ և գրավիչ է դարձնում:

Անժխտելի է չարենցյան տաղի գրական և հոգեբանական ներգործությունը սովորողների վրա:Բանաստեղծության միջոցով գծագրվում է Հայաստանի հավաքական պատկերը, նրա անցյալը, ներկան և ապագան:Բանաստեղծության մեջ կարելի է լսել հեռավոր արձագանքները մեր բազմադարյան գրականության: Անբացատրելի զորությամբ բանաստեղծը 16 տողի մեջ համադրել է հայ գրականության երկար ու ձիգ ճանապարհին այնքան առատորեն սփռված հայրենիքի սերն ու կարոտը, ողբի և հույսի նվագները:

«Ես իմ անուշ Հայաստանի»-ն Եղիշե Չարենցի հանճարի հրաշակերտներից մեկն է, որը ապրելու և ապրեցնելու է հայ ժողովրդին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Ալեքսանյան Թ. , Վերապատրաստման նյութեր:

2. Գասպարյան Դ., Ողբերգական Չարենցը, Երևան, 1990թ.;

3.Եղ. Չարենց, Երկեր, Երևան, 1983 թ.:

4. Կյանքի հմտություններ (ուսուցչի ձեռնարկ), 1-ին դասարան:

5.Չարենցյան ընթերցումներ 2, Երևան, 1974թ.:

6.Ջրբաշյան Էդ., Չորս գագաթ, Երևան, 1982թ.:

7. Վիրաբյան Ն., Պատկերազարդ հայ գրականություն, Ես իմ անուշ Հայաստանի, Զանգակ -97:

8.https://hy.wikipedia.org/wiki/%D4%B5%D5%BD_%D5%AB%D5%B4_%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B7_%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%AB%E2%80%A6